ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 դեկտեմբերի 2021թ. N 457-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԳՅՈՒՂԻ 20-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌԱԶՄԻԿ ՀՐԱՉԻԿԻ ՀՈՒՆԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝ հիմք ընդունելով Հերհեր գյուղի Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի մայիսի 10-ի N 2 որոշումը և Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի բնակիչ Ռազմիկ Հրաչիկի Հունանյանի դիմումը (մտից N 1802, 13.12.2019 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ճանաչել Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի բնակիչ Ռազմիկ Հրաչիկի Հունանյանի (ծնված՝ 03.02.1956 թ.) սեփականության իրավունքը Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի 20-րդ փողոցի N 9 հասցեում գտնվող բնակելի տան՝ հարակից օժանդակ շինություններով, և այն սպասարկող հողամասի նկատմամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցված են ընտանիքին սեփականաշնորհված 0,202 հա մակերեսով 031-014 կադաստրային ծածկագրով հողամասի վրա (փաստացի չափագրումով՝ 0,20184 հա):

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և օժանդակ շինությունները, ընդհանուր մակերեսը՝ 257,83 քմ, կառուցվել են 1949 թվականին, դրանք կառուցված չեն և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, շինության պահպանումը չի հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից՝ հիմք ընդունելով որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի չափագրման փաստացի արդյունքներ՝ ըստ Ա/Ձ Անդրանիկ Ներսիսյանի կողմից 22.07.2016 թ. տրված հողամասի, շինությունների հատակագծերի և շինությունների բնութագրի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռազմիկ Հրաչիկի Հունանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2021թ. N 458-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 19 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝ հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի վարչական ղեկավարի կողմից 2021 թվականի հոկտեմբերի 20-ին տրված՝ Գնդեվազ համայնքի տնտեսությունների N 2 գրքից տրված քաղվածքը (գրանցման N 176) և Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Ենոք Ղամբոյի Ղազարյանի դիմումը (մտից N 1698, 23.11. 2021 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ճանաչել Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչներ Խամբո Հարությունի Ղազարյանի (ծնված՝ 15.02.1952 թ.), Աղավնի Գրիգորի Ղազարյանի (ծնված՝ 04.01.1956 թ.), Ենոք Ղամբոյի Ղազարյանի (ծնված՝ 24.01.1979 թ.) և Էդգար Խամբոյի Ղազարյանի (ծնված՝ 28.07.1982թ.) սեփականության իրավունքը Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 2-րդ փողոցի N 19 հասցեում գտնվող բնակելի տան՝ հարակից օժանդակ շինություններով, և այն սպասարկող հողամասի նկատմամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցված են ընտանիքին սեփականաշնորհված 0,73 հա մակերեսով 10-016-0006-0002 կադաստրային ծածկագրով հողամասի վրա (փաստացի չափագրումով՝ 0,70712 հա):

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և օժանդակ շինությունները, ընդհանուր մակերեսը՝ 511,9 քմ, կառուցվել են 1979 թվականին, այն կառուցված չեն և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, շինության պահպանումը չի հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից՝ հիմք ընդունելով սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի չափագրման փաստացի արդյունքներ՝ ըստ Ա/Ձ Անդրանիկ Ներսիսյանի կողմից 12.08.2021թ. տրված հողամասի, շինությունների հատակագծերի և շինությունների բնութագրի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման 1-ին կետում նշված անձանց որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 դեկտեմբերի 14
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2021թ. N 459-Ա

«ԳՆԴԵՎԱՆՔ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ 62-րդ և 64-րդ կետերի, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 80-Ն որոշման և հաշվի առնելով «Գնդեվանք» ՍՊ ընկերության տնօրեն Ռուբեն Կոստանյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի դեկտեմբերի 14-ի N 1810)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. «Գնդեվանք» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող, Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 2(24) հասցեում գտնվող անշարժ գույքը՝ «Գնդեվանք» սրճարանը, վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Շահումյան փողոց N 24:

2. «Գնդեվանք» ՍՊ ընկերությունը՝ ի դեմս Ռուբեն Նապոլեոնի Կոստանյանի, պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031096 հաշվեհամարին մուծել 20000 (քսան հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Չեղյալ համարել «Գնդեվանք» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նախկին հասցեն:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից: :

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 դեկտեմբերի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2021թ. N 460-Ա

«ՀԱՅԳՅՈՒՂՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ՀԱՅԳՅՈՒՂՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերության ղեկավարի 2021 թվականի նոյեմբերի 29-ի դիմումը՝ (մտից N 1764)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. «Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագիր» պայմանագրի շրջանակներում իրականացվող «Եղեգնաձոր» ՋՕ ընկերության սպասարկման տարածքում գտնվող Վայքի ինքնահոս ջրատարի ձախ ճյուղի խողովակաշարի՝ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղով անցնող հատվածի վերականգնման նախագծման համար «ՀԱՅԳՅՈՒՂՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերությանը տալ նախագծման թույլտվություն:

2. «ՀԱՅԳՅՈՒՂՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերությունը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀԱՅԳՅՈՒՂՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 դեկտեմբերի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2021թ. N 461-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի նշանակությունը փոփոխելու կարգ»-ի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ 62-րդ և 64-րդ կետերի հիման վրա, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Էդվարդ Հովհաննիսյանի դիմումը (մտից N 1815, 15.12.2021 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Թույլատրել Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Էդվարդ Հովհաննիսյանին փոխելու Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 11ա հասցեում գտնվող սեփական հասարակական նշանակության անշարժ գույքի՝ շենքի (հիմք՝ N 1198675 վկայական), գործառնական նշանակությունը որպես բնակելի տան՝ առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փաստաթղթերի՝ գույքի հասցեավորումը ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով վերահասցեավորելով որպես *ք. Ջերմուկ, Շահումյան փողոց N 11 բնակելի տուն*:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված շենքի պահպանման ու սպասարկման համար առանձնացված 0,07 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակելի կառուցապատման հողամաս:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված շենքի գործառական նշանակությունը բնակելիիփոփոխելուց հետո այն ընդգրկել Ջերմուկ համայնքի բնակարանային ֆոնդում:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդվարդ Հովհաննիսյանի որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2021 դեկտեմբերի 16
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2021թ. N 462-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով թիվ 36 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 45-Ա որոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրք Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 142.2–րդ հոդվածի 2-րդ և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3.2-րդ մասերով՝

1. Ընտրված լինելով օրենքի ուժով՝ 2021 թվականի դեկտեմբերի 17-ից ստանձնում եմ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ղեկավարի լիազորությունները:

2. 2021 թվականի դեկտեմբերի 17-ից դադարեցնում եմ Ջերմուկ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի լիազորությունների կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 դեկտեմբերի 17
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2021թ. N 463-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՄԱՐԳԱՐԻՏ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԽՈՀԱՆՈՑ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N 79-Ն որոշման, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Մարգարիտ Նահապետյանի՝ ս/թ դեկտեմբերի 20-ի հայտը (մտից N 1828)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Մարգարիտ նահապետյանին տալ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի 1-ին փակուղու N 3 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում ամառային խոհանոց կառուցելու շինարարության թույլտվություն:

2. Մարգարիտ Նահապետյանը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք, ինչպես նաև համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 11250 (տասնմեկ հազար երկու հարյուր հիսուն) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարգարիտ Նահապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 դեկտեմբերի 20
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 դեկտեմբերի 2021թ. N 464-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 15-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 72 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 19-ի «Ջերմուկ համայնքի վարչական տարածքում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինականացված ինքնակամ կառույցները և դրանց պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասերը գնման նախապատվության իրավունքով կառույցն իրականացրած անձանց ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին» N 71-Ա որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Արուհի Հայկի Ալեքսանյանի դիմումները (մտից N 195՝ 27.01.2021 թ. և N 1827՝ 20.12.2021 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի նոյեմբերի 8-ի N 08112021-10-0022 վկայական) Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 15-րդ փողոցի N 72 հասցեում գտնվող 38,97 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը (արտաքին մակերեսը՝ 41,86 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 41,86 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Արուհի Հայկի Ալեքսանյանին:
2. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
   2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1100 (հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.11).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 810 (ութ հարյուր տաս) դրամ:

4. Արուհի Հայկի Ալեքսանյանը պարտավոր է վճարել՝

1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝46050 (քառասունվեց հազար հիսուն) դրամ՝ ավտոտնակի գինը

2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝33910 (երեսուներեք հազար ինը հարյուր տաս) դրամ՝ հողամասի գինը

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Արուհի Հայկի Ալեքսանյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արուհի Հայկի Ալեքսանյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 դեկտեմբերի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2021թ. N 465-Ա

«ԱՐՍՔԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ կետերի, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 80-Ն որոշման և հաշվի առնելով «Արսքար» ՍՊ ընկերության տնօրեն Յ. Ս. Թունանյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 1844)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. «Արսքար» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող, Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասում գտնվող անշարժ գույքը՝ թիվ 3 կաթսայատանը, տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Սայաթ Նովայի փողոց N 46:

2.«Արսքար» ՍՊ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031096 հաշվեհամարին մուծել 20 000 (քսան հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից: :

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2021 դեկտեմբերի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2021թ. N 466-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 13/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 19-ի «Ջերմուկ համայնքի վարչական տարածքում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինականացված ինքնակամ կառույցները և դրանց պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասերը գնման նախապատվության իրավունքով կառույցն իրականացրած անձանց ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին» N 71-Ա որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Գևորգ Վարազդատի Բաբաջանյանի դիմումները (մտից N 141՝ 26.01.2021 թ. և N 1716՝ 26.11.2021 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի հոկտեմբերի 25-ի N 25102021-10-0006 վկայական) Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 5-րդ փողոցի N 13/1 հասցեում գտնվող 17,39 քառակուսի մետր ներքին մակերեսով առևտրի սրահը (արտաքին մակերեսը՝ 20,9 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 20,9 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Ջերմուկ համայնքի բնակիչ Գևորգ Վարազդատի Բաբաջանյանին:
2. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
   2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով՝

1) շինության 1 քառակուսի մետրի համար՝ 9900 (հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.11)

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 810 (ութ հարյուր տաս) դրամ:

4. Գևորգ Վարազդատի Բաբաջանյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝206910 (երկու հարյուր վեց հազար ինը հարյուր տաս) դրամ՝ շինության գինը.

2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝16950 (տասնվեց հազար ինը հարյուր հիսուն) դրամ՝ հողամասի գինը:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Գևորգ Վարազդատի Բաբաջանյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գևորգ Վարազդատի Բաբաջանյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 դեկտեմբերի 27
Ջերմուկ